

ԴՐԱՅԻԿ

„ՀԱՅ ՅԵԼԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՅ“ ՕՐԳԱՆ

ՄԵՐ ԾՐԱԳԻՐԸ

Օգոստոս, 1894

Այս ժամանակից, երբ մարդկութիւնը ուս է դրել քաղաքակրթութեան ուղիի վրայ, այն ժամանակից, երբ նա սկսել է ունենալ իր պատմութիւնը, մենք տեսնում ենք ամեն տեղ և ամեն ժամանակ իշխողներ ու հպատակներ, կեղեքողներ ու կեղեքվողներ, տանջողներ ու տանջվողներ։ Տառապեալների լաց ու կոծի, աշխատաւորի ծանր տնքոցի հետ միասին ամեն տեղից մեր ականջն են հասնում ձրիակեր իշխողների ցնծական աղաղակները։ Այսպէս է եղիկ անցեալում, այսպէս է այժմ սակայն այդպէս չի լինի ապագայում։— մենք հաւատացած ենք դրանում։ Մենք շատ լաւ տեսնում ենք, թէ ինչպէս իշխող դասակարգերն ընկնում են աւելի և աւելի թէ ֆիզիքապէս և թէ բարցյապէս, ինչպէս աշխատանքը ձեռք է ձգում հետզհետէ իր իրաւունքները, ինչպէս կեղեքվող տարրը հսկայական քայլերով մօտենում է իր վերջնական յաղթութեան։ Եւ նա կը հասնի կատարեալ յաղթութեան, երբ կը վերանան ամեն տեսակ դասակարգեր, երբ աշխատանքի միջոցները և արդինքը կը դառնան աշխատաւորի կատարեալ սեփականութիւն, երբ մարդկանց կառավարութեան իը փոխարինի կրեքի կառավարութիւնը։

Բայց ինչպէս կարելի է հասնել այդ բաղդակի ապագային։

Կար ժամանակ, երբ մարդկութեան բոլոր ցաւերը բուժելու, տիրող անհաւասարութիւնը ջնջելու, եղայրութիւն, ազատութիւն ու հաւասարութիւն հաստատելու, համար մարդկութեան բէֆօրմատօրներն երևան էին գալիս այս կամ այն վարդապետութիւնով իր որոշ ոհաւատոյ հանգանակներով։ Համոզված իրենց վարդապետութեան արդարութեան մէջ ոգեսորված վեհ զգացումներով պատրաստ կրել ամեն տեսակ զրկանքներ, զոհել իսկ կեանքն իրենց գաղափարները մարմացնելու համար, այդ բէֆօրմատօրները նպյում էին ամբողջ մարդկութեան վրայ այնպէս, ինչպէս իրենց

վրայ նրանք հաւատացած էին, որ համայն մարդկային հասարակութիւնը կարող է ունենալ նոյն զգացումները, նոյն ձգտումը, նոյն պատրաստականութիւնը, ինչ որ իրենք ունեն, որ իրենց վարդապետութիւնը կարող է իրականանալ հենց վաղը։ Հարկաւոր է միայն քարոզել հասկացնել նրա արդարութիւնը և օրինակներ ցցի տալ։

Անցան դարեր, մեկ վարդապետութիւն փոխարինեց միւսին, շատ ըէֆօրմատօրներ զոհվեցին, բայց և այնպէս մենք աեսնում ենք որ մարդկութեան, մի մասը, որի համոզվիլ իսկապէս անհրաժեշտ է, որովհետեւ դրա ձեռքին է գտնալում անարդարութեան բանալին, դեռևս չի համոզվել չի ուզում համոզվել և ոչ մի կերպ էլ չի համոզվիլ քանի դեռ այդ իրեն ձեռնառու չէ։ Համոզէք քաղաքակրթված անգլիական լորդին, որ նա իրաւունք չունի իրանգացիներին կեղեքելու, համոզէք բարձրագոյն ուսումնական աշխատանքը մեր բէկերին, աղաներին, որ հանգիստ թողնեն գիւղացիներին, համոզէք, վերջապէս, քրդին, որ նա ոչ մի բարցյական իրաւունք չունի Ալաշկերտցու տունը և ընտանիքը զափանելու . . .

Մի և նոյն ժամանակ պատմութեան դառն ու դաժան դասերն ակներկ կերպով ցցի տուին, որ մարդկութեան տանջված մասի հասկանալը, համոզվիլը, մինչեւ իսկ ցանկութիւնը բարեփոխել իր դառը վիճակը, բաւական չեն դեռ ևս յաղթանակը տանելու, որ անհրաժեշտ է ձեռք բերել բացի այդ, և իրական ոյժը յանկարծակի չի ստեղծվում, որովհետեւ նա արդիւնք է գոյութիւն ունեցող պայմանների և փոփոխում է այդ պայմանների փոփոխման համար, ուստի պարզ է, որ ոչ մի հասարակական կազմակերպութիւն, որքան էլ նա իդէալական լինի, մի անգամից անկարելի է իրականացնել, որ արդ իդէալական կազմակերպութեան կարելի է հասնել միմիայն գոյութիւն ունեցող պայմանները բարեփոխելով։

Հ. Յ. Բ. ԲԻԿՐՅԱ
ՊՈՂԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. LIBRARY

Հենց այս պատճառով մենք ասպարէզ չենք եկել իրուե այս կամ՝ այն ուսուական վարդապետութեան պատճառովները, մենք չենք ձգտում մտցնել մեր կեանքի մէջ այս կամ այն ողաւանութիւնը՝ հանդերձ իր Հանդասակներով։ մենք մեր ժողովրդին չենք նկարագրում այժմ այս կամ այն իդէալական հասարակական կազմակերպութիւնն իր բոլոր մանրամասնութիւններով։ Մեր ձգտումն է, որ մեր ծրագիրը կեն ս ա կ ա ն լինի. մեր ուշադրութիւնը, գլխաւորապէս, կենտրոնացած է մեր երկրի ներկայ դրութեան վրայ. մեր նպատակն է անողոք և անաշառ քննադատութեան ենթարկել մեր կեանքի ներկայումն դոյութիւն ունեցող պայմանները; բաց անել բոլոր այն ցաւերը, որից տանջվում է մեր բազմաչափար ժողովուրդը, և Հիմնված հասարակական գիտութեան դրական օրէնքների վրայ՝ պարզել այդ ցաւերի է ա կ ա ն պատճառները ու միաժամանակ կատաղի կուլ մղել այդ ցաւերը պատճառող վակարտների դէմ։ Հիմնված նոյն դրական օրէնքների և երկրի ներկայ պայմանների վրայ՝ մենք կարծարծնենք, կը պարզենք այն դրութիւնը, որն անհրաժեշտ նենք համարում փոխարինել ներկային։

Տեսնենք այժմ, ինչ է ներկայացնում մեր կեանքը։

Տաճիկները մեր երկրին տիրապետելուց յետոյ ամեն ջանք գործ են դրել մեր ժողովուրդը դարձնել մի կ ա ս տ ա, որի պարտականութիւնը լինի միմիպյն աշխատել արդիւնաբերելու ուրիշ ոչին։ Հարկաւոր էր այդ ժողովրդին մշտական հպատակութեան տակ պահել և անարդել կերպով ծծել նրա արիւն քրտինքով ձեռք բերած, աշխատանքը։ Հենց դրա համար անհրաժեշտ էր մեռյնել այդ տարրի պատերազմական ոգին, թողնելով նրան աշխատել եղան նման և այդ աշխատանքով կերակրել տիրապետող տարրը։ Նրանք բնաջնջն արին մեր ազնուականութիւնը և իրենք բռնցին նրա տեղը, նրանք լիւցին ժողովրդի ձեռքից սուր, հրացան, ամեն տեսակ պաշտպանութեան զէնքեր և թողին միպյն մէկը՝ դութանը։ Նրանք արտաքսել են մեզ զինւորական ծառայութիւնից և զինւորի փոխանակ մեզանից առնում են բազմատեսակ հարկեր կերակրելու իրենց զինւորներին և բազմաթիւ պաշտօնեաներին. ամենածայրայեղ դէպերում, մինչեւ անգամ, չէին դիմում մեր օգնութեանը. Երկիւղ կրելով, որ այդ զէնքը մի օր կարող է իրենց գլխին դառնալ. Մի խօսքով տաճիկները ձգտել են մեզ գնել ճիշտ այն դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ էին ի լուսն եր սպարտացիների ձեռքին։ Քարեբախտաբար, զանազան պատճառներով, որոնց մասին խօսելի այստեղ երկար կը լինի, այդ բանը նըրանց չյաջողվեց, նրանց ձգտումը չկարողացաւ իրա-

կանանալ լիակատար կերպով։ Բայց և այնպէս, երկրի ժողովրդի մէջ որոշվում էր երկու իրարից բաժանված, եթէ ոչ կաստա, գմնէ դասակարգ, հիմնված բռնի ֆիզիկական ուժի վրայ. մի կողմից՝ առանձնաշնորհեալ մուսուլման տարրը, միւս կողմից՝ բազմաթիւ քաղաքական իրաւունքներից զրկված քրիստոնեայ ժողովուրդը։ Ժամանակի ընթացքում, գլխաւորապէս երկրի տնտեսական զարգացման շնորհիւ այդ երկու դասերի տարբերութիւնը աստիճանաբար նուազել է, բայց դեռ բոլորին չէ վերջացել։ Նա դեռ իիստ է զգացվում։ Այդ անհաւասարութեան պաշտպանը, ոյժ տուողը ներկայումս տաճիկ կառավարութիւնն է։ Պէտք է ուրեմն դէն ձգել այդ կառավարութիւնը, պէտք է ձեռք բերել ազգերի և դաւանութիւնների հաւասարութիւնը օրէնքի առաջ։

Բացի այդ՝ երկրի ազգաբնակութեան մէջ տիրում է աչքի ընկնող կուլուր ա կ ա ն անհաւասարութիւն։ Ազգաբնակութեան մի մասը՝ քիւրդը դեռ ևս վարում է կիսավայրենի, նօմադական կեանք և իր է-ութեամբ թշնամի է խաղաղ երկրագործ դասին։ Շնորհիւ վերցիշեալ անհաւասարութեան պայմանների, նաև կարծարագործ դասին։ Շնորհիւ վերցիշեալ անհաւասարութեան, հայ երկրագործ ժողովուրդը անկարող է լինում ինքն իրեն պաշտպանելու։ Եւ տաճիկ կառավարութիւնը փոխանակ օգնութեան գալու կուլտուրապէս բարձր կանգնած խաղաղ աշխատող տարրին, փոխանակ զսպելու այդ աւազակների անընդհատ յարձակումները, փոխանակ աշխատելու այս կամ այն միջոցով նրանց խաղաղ պարագմունքների դարձնելու, ընդհակառակը, ինքն է քաջալերում այդ աւազակներին, նրանց կողոպուտի մասն ինքն է ստէպ ստէպ վայելում և, վերջապէս, ինքն է բացարձակապէս, ափա-աշկարայ, նրանց զինում իր սեփական հրացաններով։

Բացի այս բացասական նշանակութիւնը, որ ոմնի տաճիկ կառավարութիւնը մասնաւորապէս հայերիս նըրկատմամբ, նա ունի և ընդհանուր նշանակութիւն իր բոլոր հպատակների վերաբերմամբ։

Սկզբներում, երբ տաճիկները նոր երկացին մեր կողմերը, երբ դեռ ամեն մի տաճիկ զինւոր էր, տաճիկ կառավարութիւնը համարեա թէ առանձին մարմին չէր կազմում։ Նա նոյնն էր, ինչ էր համայն տաճիկ ժողովուրդը. Նա ամբողջուն վիճակ հպատակ ժողովրդների արիւնը։ Բայց որովհետեւ այդ ահագին բազմութիւնը անկարող էր պահպանել իր գոյութիւնը կողոպուտով, թալանով, որովհետեւ ոչ մի հպատակ ժողովուրդ, որքան էլ որ նա աշխատասէր, արդիւնաբերող լիներ, ոչ մի հնարաւորութիւն չունէր իր աշխատանքի արդիւնքով կերակրել և դրանց, տաճիկ ժողո-

վըրդի ահագին մասն ստիպված պէտք էր դիմեր խաղաղ պարապմունքների, ստիպված ինքն էլ պէտք էր արդինաբերեր, թողնելով հպատակ ազգերի աշխատանքով ապրելու արտօնութիւնը իր աւելի ուժեղ, աւելի ձարպիկ, աւելի խորամանկ մասին, որը և դառաւ երկի տիրապետող տարրը: Այդ դեռ հերթիք չէր: Խաղաղ պարապմունքի դիմած տաճիկ տարրը ոչ թէ միայն ստիպված էր հրաժարվել հպատակ ազգերին կեղեցելու իրաւունքից, այլ և հետզհետէ ինքն էլ ընկաւ նրանց գրութեան մէջ և նոյնպէս սկսեց կեղեցվել իր սեփական ազնուականութեան, իր սեփական կուռավարութեան ձեռքից:

Հենց այդ կառավարչական մարմնն է, որ բաւականացափ զտվելով ազգաբնակութիւնից, ծանր կապարի նման ընկած է իր բոլոր խաղաղ և աշխատաւոր հըպատակների կրծքին: Նա ունի այժմ բազմաթիւ մըշտակ ան զօրք, թնդանօթներ, վերջին ձեի հրացաններ նրա հրամանի տակ են ոստիկանութիւնը, լրտեսների ահագին բանակը, դահիճները, նրա ձեռքին են բանտերը, աքսորավայրերը. և այդ իր ուժով նա ձնշում է և ծծում... Եւ վայ նրան, ով կը համարձակվի գըլուխ բարձրացնել գրա դէմ: ով կը համարձակվի խըլել դրանից կամ բոլորովին արգելել այդ ծծելու իրաւունքը: Լինի դա ապստամբ արար, տաճիկ սօֆտա, կամ հայ յեղափոխական, միւնոյն է: Դրանց դէմ են զօրքը, ժանդարմները, դրանց համար պատրաստ է բանտը, աքսորը, կախաղանը: Մարդկանց հոգեկան աշխարհը կաշկանդված է ամեն կողմից, հալածված է մամուլը, հալածված է խօսքը, հալածված է խիճը:

Այս բոլորին վերջ կարող է տալ միմիայն բռնի յեղափոխութիւնը, և մենք դիմում ենք նրան: Պէտք է թօթափել այդ իայտառակ լուծը, ոչնչացնել ներկայ միապետական բռնակալ բէժիմը, ձեռք բերել ազգերի համերաշխութիւն, աշխատանքի ապահովութիւն, խղիքի խօսքը ու համոզմունքի ազատութիւն:

Սակայն այդ արտաքին բռնակալ լուծը հեռացնելը, ինքնավարութիւն ստանալը վերցիշեալ քաղաքական իրաւունքներ ձեռք բերելը մենք մեր նպատակին հասնել գեռ չենք համարում: Դա միայն գործի մի մասն է: Միայն դրան ով մենք չենք կարող ապահովել աշխատաւորին իր աշխատանքից լիակատար կերպով օգտվելու հնարաւորութիւնը: Աշխատաւոր դասի շահերի դիմաց կանգնած է և մի ոյ ժ, որը ներկայում համեմատաբար թոյլ է, որը ներկայ պայմաններում գեռ հնարաւորութիւն չունի բացարձակապէս, իր ամբողջ ուժով արտայայտվելու և որը որոշ չափով ձնշված է բռնապետական բէժիմի տակ: Այդ ոյժը տնտեսսական

զարգացման և դրա հետեւանք՝ անտեսական անհաւասարութեան սյժն է: *(Առաջային կը շարունակվի)*

Ն Ա Մ Ա Կ Ա Լ Ա Ը Կ Ե Ր Տ Ւ Ց

(Հարունակ)

Զալալցի ցեղապետ Աթաշ աղի տղան՝ Խրահիմ աղան խփում, սպանում է իր հօրեղբօրը, որպէս զի տիրանայ նրա կալուածներին: Սպանվածի որդիքը պահանջում են «արեան գին»: Աթաշ աղան հաւաքում է 30 սոմար Մանկասարից 15 սոմար Ղազիից և տասը սոմար Զերօ գիւղից:

Համիդեայ քրդերը չբաւականանալով հայերի կողոպտումից, Բասենու կողմից մի հարուստ թիւրքի տուն կողոպտում և բերում Ալազինը, իսկ կառավարութիւնը մեծ զանք է գործ դնում, որ այդ գողացած իշրերը յետ ստանայ. Քրդերը չկարողանալով ամբողջովին պարտկել, Համիդէյի զօրքի ընդհանուր հրամանատար Ռահմանի դահմի փաշայի խորհուրդով տանում են Զուջուն, Ղումլուապուձաղ Բուրգյան և Մանկասար հայ գեղերը և այդ գեղերի հարուստ ճանաչված մարդկանց խոտի գեղերում պահում առանց նոցա իմաց տալու (Նախասեմ որ համարեա բոլոր հայ գիւղերի պահապանները քրդեր են. իհարկէ, վախենալով նոցանից պահապան են վարձում): Այդ բոլոր գործողութիւնը յայտնի լինելով պահապաններին, գնում յայտնում են փաշային և զայմաղամին: (Ղայմաղամը մի քանի ամսայ եկած է քաղաքակրթված Ստամբուլէն): Գալիս շրջապատում են Մանկասար գիւղը, նախ բռնում են այն մարդկանց, որոնց խոտի գեղերում գտնում են այդ իրերը. կապում են և ուղարկում Ղարաբիլայի բանդը: Իսկ դոցա կանանց հաւաքում են մի օդայի մէջ որպէս թէքնութեան համար. ղայմաղամը նախ բոլորին ծեծել է տալիս և ապա հրամացում է շիշեր կարմրացնել և դաղել նոցա ներքեւի մասը... .

Զաւուշներից մէկը տաճկական սովորութեամբ գեղացիներին համոզում է նախ, ապա հրամայում անելով՝ 30 սոկի հաւաքեցէք, ես կը տանեմ ձեր կողմից փաշային և զայմաղամին և ոտը կրնկնեմ, կը ներեն և այդ գատիժը չեն տար: 30 սոկի փաշային և զայմաղամին և մէկ սոկի էլ չաւուշն տալով, թողնում են այդ պատիժը և ապա կանանցից սիրուններին առանձնացնում են, որպէս թէ համոզելու և ինդրելու որ գողացած իշրերի տեղն ասեն. երկու ժամ առնձնացնելուց յետոյ... պահապանների առաջնորդութեամբ հանում են ապրանքը 10 սոմար ցորեն էլ պահապաններն են ստանում, որպէս թէ, եթէ իրանք չլինէին, շատ նեղութեան կը տային գեղին: Ապա իրեւ տուգանք բանդարկեալներից 20 սոկի են առնում և թողնում:

Բաղնոցի Հուսէին փաշան քանդել է տալիս Բաղնոցի, Զիրաքը գիւղերի եկեղեցները և գերեզմաննոցները: Զիրաքը մի նոր վանք կայ Նազարեաբա անունով, թէ հայ, թէ թուրք, թէ քուրդ ամեն տարի փարտավորին մեծ բազմութեամբ գնում են ուխտ. վանքի մէջ կայ երկու կուսի գերեզման. վանքը քանդելուց յետոյ,

անդել է տալիս և գերեզմանոցը. քանդելու ժամանակ սվում է գերեզմանից հառաջանքի ձայն. քանդողների եռները թուղանում են. նոքա թողնում են քանդելու ուսեւն աղան այդ ժամանակ կատաղում է հայհոյելով՝ քուրդերին հրամայում է քանդել. իսկ քանդելու պատահն է լինում իր համար նոր տներ շնել տալը. իսկ տեղական հայերը հալածված՝ հեռանում են յդ կողմերից. ոմանք դէպի Ալաշկերտ են գաղթում, մանք էլ դէպի Ռուսաստում:

Ն Ա Մ Ա Կ Տ Ա Ր Ո Ւ Ւ Ց (Հարունակ)

Ք ը դ ա ց բ ա ր բ ա ր ո ս ա ր ա ր ք ն. — Ա յսպէս, առավարութիւնը մի կողմէ իր խժժութիւնը ի գործ ներկ և միւս կողմէ քիւրդ ցեղերը ուղի հանելով ուշ և Սասուն աւերակ դարձան: Վէյպիս գիւղի մէջ անանցի աշխրէթէ երեք տուն քրդերէն Խօս անուն շիւրդն նոյն գիւղի Մարտիրոսեան Շուշան անուն կը յս ախցնելով, ուղղակի գայմագամանիսա Աւրա գիւղը կը անի: Երբ հայերը գայմագամին կը դիմեն, գայմագաւը և գատին հայ կոյսն ատեան բերելով կը հարցանանեն: Աղջիկը կը յայտարարէ. «Հայ եմ և ազատուիւն կը պահանջեմ:» Խօս գատին կսկսի հայհոյել և պառակիրներ կարդալ և երբ աղջիկն այս սպառնափներէն ըընկճվիր, յայնժամ կը յանձնեն գատիին ամոգել: Վերջապէս նրան կառեանգեն և բռնի կրօպիս կընեն:

Մշշ արևմտեան լեռանց վրայ գտնվող կուարս գիւացի Մարդար անուն հայի գոմի լրայ Ճիպրանցի արէթէն Խօս անուն հոչակաւոր աւազակապետի խումըն (որ համիդեայ հեծելազօրաց հազարապետն է) արձակվելով մի քանի եզ և 200 ոչխար կը տանի: արձարն գիտենալով կառավարութեան հայոց մասին ունած դիրքն, կը դիմէ ուղղակի Խօսի քով և ուղեր ընելով, կաղաչէ, գէթ ոչխարաց կէս մասը դարձէ: Խօսն, ցուցնելով ոչխարներն ու տաւարներն, կը սէ. Թագաւորն ալ ես եմ, վալին ալ և ոչ մէկէն ալ ահ ունեմ: ահա ոչխարներդ, բայց չեմ տար:» Խեղճ հայն լիակոր ու յուսահատ ետ կը դառնայ:

Նոյնպէս Մշշ հարաւ արևմտային լեռանց վրայ տնվող Տալքի քիւրդերը Տատրոգոմ գիւղի ընակիչ էյպի եզը տանելով հայ երիտասարդներն ետևներէն իյնան և յիշեալ գիւղի մօտ քրդաց հասնելով, եզը ը բռնեն. բայց քրդեր յարձակվելով կսկսեն զարնել իրաւորել. Այդ պարագային հայ երիտասարդները թէւ իշ բայց մեծ քաջութեամբ կսկսեն կովիլ և քրդերէն ։ քանի ծանր վիրաւոր գետին կիյնան. քրդաց թիւը տուարանայ, և Օկան ու Կիրօ անուն երիտասարդները անրապէս վիրաւորվելով, ետ կը դառնան: Հայերը պառնան այս չարեաց մասին կառավարութեան դիլ: Քրդեր կսկսին պոռալ. ոչ թէ մենք ձեր եզը բեմ ենք, այլ դուք յեղափոխականներ կանցունէք այս այն կողմ, և ատոր համար կեանքերնիս ալ կը զումբ. եթէ կը փափագիք, դիմէք կառավարութեան:» րդէն լոկ յեղափոխական բառը բաւական է կառավա-

րութեան՝ գիւղեր ոտնակոխ ընելու, ոչնչացնելու և այլն կառավարութեան կատաղութիւնք ի Խուլք: Սամնոյ արևմտեան կողմ գտնվող Խուլք գաւառակն ևս գարնանէ ի վեր ալէկոծ մրցիկն մէջ կը տատանի: Սաղտուն գիւղէն 12 երիտասարդներ առանց որ և է պատճառի մը ձերբակալիելով գարնանէ ի վեր բանտի մէջ կը հեծեն: Նոյնպէս Ղզը-Աղաճ գիւղացի՝ 80 ամեայ ծերունի Տէր Մամբրէ քահանան, որն երկու տարի առաջ Ա. Կարապետի նուիրականութեան պաշտօնով կուզէր անցնել Տիգրանակերտի գաշտը Խուլք գաւառակն մէջ կառավարութիւնը ձերբակալիելով քանի մը քիւրդ աղաների երաշխաւորութեամբ հազիւ կը թողլի, սա պայմանով որ այլ ևս Ղզը-Աղաճ չվերագառնայ: Երբ հալածանքն սկսվեցաւ ի Ղզը-Աղաճ և իր մերձակայ գիւղերն (տես Նախորդ թղթակց.), մի քանի փախստական երիտասարդներու պատճառաւ, նախ կառավարութիւնը մէծ ջանք թափեց ձերբակալի յիշեալ քահանայի Արմենակ որդուն: Երբ չյաջորդեցաւ ձերբակալի լուսակաց հայրն, վերցիւն լուսակաց հայրն, վերցիւն լուսակաց Մամբրէ քահանան ի Խուլք և հետիոտն մինչև Կինմի միւթէսէրի գիւղէն պաշտօնատեղին բերելով, ճանապարհին անլուր հայհոյանք և ամենամեծ նեղութիւն կուտան: Մի քանի շաբաթ սղն բանտի մէջ պահելէ վերջ կրկին նոյն օրինակ նեղութեամբ կը փոխադրեն Բաղեցշը բանտը: Ցարդ կը մայ նոյն բանտի մէջ: Քաջ գիտեմքը, որ չտոկալով բանտի նեղութեանց իր վերջին ծայր ծերութեան պատճառաւ զոհ պիտի լինի տաճիկ կառավարութեան անյագ կրկից, կարօտ մնալով փախստական զաւակաց տեսութենին և աւերակ դարձած տան: Նոյնպէս Ղզը-Աղաճ գիւղէն փախստական լինելով յեղափոխական անուամբ Աստւածատուր Ա. Յովհանիսեանի, Արթին Կարապետեանի, Մկրտիչ Սողոմոննեանի, Մօսիկ Թումայեանի, Յովհաննէս Տէր Պողոսեանի եղբայրներն ուղեց ձեռք ձգել: Այժմ նորա ևս աստ անդ թափառիկ լինելով սովորութիւն դարձած է հայ տները աւերակ դարձնել . . . նոյնպէս Ահարօնը գիւղէն ձերբակալված են Իէյս Բզօ անուն հայն և Պարիսէեան Մարտիկ անուն 15 ամեայ պատանին, վերջինիս մօտ գտնված է դպրոցական տեսոր մը, որոյ մէջ քանի մը ազգային երգ եղած է: Երբ պատանյոն մէծ սպառնալիք կը կարդան և ոստիկանք կսկսին մտրակով կապտուցնել մարմինը, պատանին քիւրդերէն կը թարգմանի երգերու պարունակութիւնը: Այս առթիւ կառավարութեանը կատաղի պէս կսկսի ամեն տեղ վազել և լոկ գրել-կարդալ գիտցողներու տները խուզարկել: Խենց այսպիսի վայրէնի խուզարկութեամբ հայ հասարակութեան վըրայ մէծ սարսափ ազդած է: Այժմ թէ վերցիւն լուսակաց ի Խուլք և թէ պատանին բանտի մէջ կը հեծեն նօթի ու ծարաւ: Դեռ կառավարութիւնը իր հալածանքներ կը բազմապատկէ ի Խուլք գաւառակն իր օժանդակ ունենալով քիւրդ Աշիրէթները:

Լսվեցաւ, որ յիշեալ լուսակաց բաղեցի բանտի մէջ

նօթի ու ծարաւ թողնելէն մեռած է, և մեռեալ դիակի վրայ ևս անլուր չարչարանքներ տուած են, զարնելով ճղորելով և այլն: Աերջապէս, եթէ կայ դժոխք մը՝ դա տաճկական բանտերն են: Յանցանք է հայու մը Տաճկահայաստանում մարդկութեան նշյլներ ունենալը. եթէ գտնվի այդպիսի մը, նորա բաժին բանտն, ու կախաղանն է... Այսօր ժողովուրդը վերին աստիճանի չքաւորութեան մէջ չդիտէ արդեօք իր ընտանեաց օրապահիկն հայթ այժէ, թէ բանտարկեալներ պահպանէ: Թող հաւատան ընթերցողք, որ շատ մը բանտարկեալք բանտի մէջ այլ ևս չկընալով անօթութեան դիմանալ փափագ կը յայսնեն կրօնափոխ լինելուն: Օրինակ, Մշշյ մէջ բանտարկեալ Գոմեր դիւղացի Արթին անուն երիտասարդն, որ քանից անօթութենէ նուաղած էր, բանտի առջևէն անցնեներուն կը պոռայ. „ամօթ ու մեղք կը համրիմ մատնութիւն ընել բայց ճարահատ ու յուսահատ կը դիմեմ կրօնափոխութեան՝ գէթ կեանքս ազատելու...“ Այսպէս է Տարոնյ հասարակութեան և բանտարկելոց վիճակն: Եթէ կան ճշմարիտ և անկեղծ հայեր, թող այս գլխաւոր պարագայի վրայ չափեն ընդհանուր վիճակը: Արդեօք մինչև ե՞րբ այս կրակ ու բոյի մէջ տառապենք. այլ ևս համբերութիւնը մեղ համար յանցանք է և անդործութիւնը — դաւաճանութիւն:

Ն Ա Մ Ա Կ Բ Ա Ս Ե Ն Ի Ց

Կառավարութեան հալածանք ի բասեն.— Թէև բասեն ցարդ ազատ չէ մացած կառավարութեան հալածանքներէն: Բայց անլսելի եղած է հայ եղբարց: Եթէ տնտեսապէս բաղդակից է Տարոնյ, Խնուրուի և շրջակայ գաւառաց, քաղաքականապէս արդէն նոցա հաւասար եղած է, մանաւանդ այժմէ, երբ խիստ կը հալածվի կառավարութեան կողմէ: Բասենը կը ճնշվի մանաւանդ այն պատճառաւ, որ սահմանագլուխ է, իբր թէ անց ու դարձ ընողներ կը լլան դէպի կովկաս: Արդարւ կը շփոթիմ, թէ ինչպէս նկարագրեմ բաւաեն գաւառակի վիճակն ևս: Ահա ապրիլ 20-ը կանցնի, բայց նա գեռ բաւական ձիւնապատ է: Ժողովուրդը վերջին ծայր չքաւորութեան մէջ կը տառապի, բայց կառավարութիւնը առանց ի նկատի առնելու հայ հասարակութեան նօթի և ծարաւ մեռնիը, մի կողմէ ինքը կը հարստահարէ հարկահանութեամբ, ձերբակալութեամբ և այն, մի կողմէ ալ քիւրդ տարբն բոլորովին վայրենացած, հայ դիւղեր ունակու կը նէ կառավարութեան աշքի առջև, և կառավարութիւնը կուրախանայ քրդաց ամեն մի արարքներու վրայ իսկ միւս կողմէն արդէն սովոր կը մաշէ և կայրէ հայ հասարակութիւնն... Մեր հայրենաբնակ և օտարաբնակ հայ եղբարց ուշադրութիւնն կը հրաւիրեմք այս դաւաւակի վրայ. մենք հաստատապէս դիտեմք սոցազէնք, ուազմաթերբ չունենալը: Թող հայ եղբարց իրենց ձեռնութեամբ չխնայեն, հաստատ դիտնալով, որ եթէ փոքր յուղմունքներ ծագի, Տարոն, Խնուրու, Բասեն և շըրջակայ գաւառակներն արդէն կոչնչանան և կը կորպին:

1893թ. Դեկտ. ամսոյ մէջ Բասենի Խաջան դիւղացի Պէրպէր Մինաք անուն անձը սպանված և ոչխարի պէս մորթված կը գտնվի:

1894թ. Յնք. ամսոյն Տոտի գիւղացի Պօղոս էֆ. Համազապ ու Վարդան անուն երիտասարդները ի կովկաս կանցնին իրենց ազգականաց տեսութեան առթիւ վերադրձին կը ձերբակալվին կառավարութեան զէնք բերելու պատրութակաւ և գեռ կը հեծեն կարնոյ բանսերու մէջ կը լցնեն: Երևակայեցէր թէ ինչ կը լինի այդ խեղճերու վիճակը, երբ անօթութեան է կը փախչին կիյնան այդ գաղանաց ձեռք: Նամանաւանդ, նկատեցէք աստ տաճիկ զօրքի բարյականութիւնը, երբ տեսնի օտար վայրերում ինկած հայոց կոյս աղջիկներ ու հարսեր... .

Սոյն ոստիկանները գրեթէ աւազակախումբ կազմած են. Տէլի-Պապիսի գիւղի մէջ հանդիպածը առևանդելէ և կողոպտելէ զատ, ոյն իսկ գիւղացիք պաշարման վիճակի մէջ գրած են: Ապրիլ ամսոյ սկիզբ հայ պատանի մը մեռնելով թաղելէ վերջ կառարկեն, թէ մեռելի պատրուակաւ գէնցեր կը պահեն գետնի տակ և երթալով գերեզմանը կը բանան և մինչև անդամ պատանըը կը ձեւն ու կը տեսնեն պատանւոյն դիակը: Այլ ևս մեռեալներն անգամ հանգստութիւն չունեն գերեզմանի մէջ իսկ: Ո՞չ անիծեալ բաղդի ժամանակ և դրութիւն... .

Ապրիլ ամսոյ 15-ին Հասան-Գալէի գայմագամը, ոստիկանաց հարիւրապետն օստիկաններով կը ձերբակալվեն Հերթե գիւղէն Հայրապետ, Բալօ և Պօտօ անուն անձինք: Առաջին երկուքն առանց որ և է պատճառի մը, իսկ վերջինս իբր թէ ի կովկաս գնացած է: Այս ամբաստանութիւնն ըրած է նոյն գիւղացի Հաճիպէյը յը, որ արդէն կառավարութեան կոյր գործիք և հայոց արեան ծծողն է: Սոցա ձերբակալման երկրորդ օրը զատիկ էր. ի՞նչ կեանք կամ ի՞նչ պիտի լինի այն ընտանեաց զատիկն, որոնց որդիները բանտերու մէջ նօթի, ծարաւ կը տքնին... .

Ք ր դ ս ց հ ա ր ս տ ա հ ա ր ու թ ի ւ ն ք.— Պատիճուա գիւղի մէջ ցերեկով Մինաս անուն շրջուն վաճառկանի վրայ քրդերը յարձակվելով մահուան աստիճանի հասցնելէ վերջ գոյգերը կը տանեն:

Թորթան գիւղ քրդաց հարստահարութեանց պայլ ևս չողոկալով բոլորովին ցիր ու ցան եղած է աստ և անդ Խազան գիւղի Մարկոսի տան վրայ յարձակվելով մարդերը կը կապկասպեն. ընտանեաց մէջ աղմուկ և ժխոր կը փրթի: Կսկսեն տունը թալնել: Այդ միջոցին հարկահան սոտիկանք միւս կողմէ գիւղի մէջ ձեռներով հարկ կը ժողովին. նոցա ի՞նչ հոգն է, թէ հայ տները իրենց աշքի սուած կը թալանվին: Աերջապէս չեմ կարծեր, թէ կայ գրիչ մը, որ սոցա բարբարոս արարքն պատմէ... .

Ն Ա Մ Ա Կ Ի Ն Ո Ւ Ս Ի Ց

Անցեալ իմ թղթակցութեամբ վեր ի վերցյ նշանակած էի անուսի և շրջակայքի (Մշշյ, Պուլանը գայ Պարդակայ) գաւառակներու գաղթականութեանց մասին մի քանի տեղեկութիւններ: Որքան կը յիշեմ անցեալ նամակիս մէջ գաղթականութեանց գիւղաւոր պատճառը,

այս տարուայ երաշտութիւնը կամ հացի պակասութիւնը ցցց տուի. և սակայն եթէ բուն պատճառն որունենք դուրս կուգայ մէկ ուրիշ և ամենադիմաւոր պատճառ, որ վաղուց ի վեր գոյութիւն ունի, և հետզիւտէ կը քայքայէ հայաստանցիներուն տնտեսական վիճակը այդ է՝ թէ թուրք կառավարութեան և թէ քիւրդ տարրի հարստահարութիւնները, որոնց հետզիւտէ թողուցած անրութելի հետքերն, այսպիսի սուղ տարիներում աւելի զգալի կը լինեն և կը ստիպեն խեղճ գիւղացիները գաղթել: Խնչպէս հարիւրին 60 տոկոսով փող առնէ և հաց գնէ:

Եյս գարնան մէջ պատահած երաշտութիւնն ու գէպերն ուրիշ ժամանակներ ևս տեղի ունեցած են: Սակայն այն ժամանակները ժողովուրդը տակաւին այսքան ընկճած չլինելով՝ կերպով մը առանց տեղէն շարժելու, գաղթելու իր ունեցածը կը ծախէր ու կապրէր, իսկ այս տարի եթէ. չկրնար դիմանալ, բուն պատճառն այն է, որ երկար տարիներէ ի վեր թալնվելով հարստահարվելով այլ ևս արժէքաւոր ոչինչ չէ մնացած, որպէս զի ծախէ և ուտէ: Ամենաթանկագին հողերն անդամ արժէք չունին. կով մը երեք մէծիտիէր, ոչխար մը մէկ մէծիտիէր կը ծախվի: Շատ գիւղացիներ ոչ միայն երկրորդական պէտքերն՝ այլ և բնական պէտքերն անգամ լրացնելու ոչինչ չունեն: Ցորեկվան հագուստի աւել գործածված ցնցոտիները գիշերը վերմակի տեղ կը ծառայեն, իսկ տակը խոտ է տէօչէկի տեղ: Միջին գասակարգին պատկանող գիւղացիի մը տան շարժական գոյքերը եթէ. հաւաքես և ծախես (հողագործական գործիքներով միասին) բոլորը հազի 2-300 դր: արժէք, բացի ոչխարներն ու տաւարները, որոնց սեփականութեան վրայ անդամ վատահ չէ, որովհետեւ կեանքի, պատւոյ և ընչից ապահովութիւն չը կայ: Սա չափազանցութիւն չէ, այլ ծշմարտութիւն, ինչպէս ակնյայտնի կերևի ոչ միայն անցեալ նամակէս, այլ և հետեւալ գէպերէն:

— Հոկտ. 28-ին Պարաքէօփրիւցի Հիրապի եղբօր տղուն երկու եզները գիշերով կը տանին:

— Հոկտ. 30-ին Պուրն ազայ 150 ոչխարը կը տանին օր ցերեկով Քէօշէ քրութեանակ գիւղի քրդերը:

— Սեպտ. 28-ին Փայլիկ (քրդնկ) գիւղի գլխաւորներէն Արիֆ աղան, Եռւսուլիք աղան և Ղասըմ հեծեալ և հետերնին 15 ծառաներ առած 2 է վիրմէ գիւղին վրայ կը յարձակին, բայց գիւղացիք կը դիմադրեն և մի քանին վիրաւորելով ետ կը փախցունեն առանց բան մը տալու:

— Հոկտ.-ին մէջ Արօս գիւղէն 10 կով և եզ կը տանին (1 կով Կորէեան Մարտէին, 1 արջառ Քէօչէեան Մարգարին, 1 եղ Հարամիկցի Ամրգսին, 1 կով Մօսօին, 3 եղ Պաէեան Խաչօին, 1 եղ Հազրօի տղային, 2 եղ Էնկէեան Ամրգսին. վերջինիս սրտի վրայ այնքան կը ծիծեն, որ շնչասպառ տուն կը բերեն):

Սայն գիւղացի ուստայ Մարտօն և իր եղբօրորդին, որք զնիք ունենալու ամբաստանութեամբ ձերբակալված ու Կարին տարած էին. այս անդամին Կարնոյ բանդին մէջ տրված չարչարակին չդիմանալով եղբօրորդին կը

մեռնի. իսկ առաջինը ուստայ Մարտօն, այս ծերունին բերդ փոխադրվելով ցարդ կը մնայ:


— Հոկտ. ամսոյ մէջ սոյն Արօս գիւղի քիւրդ հովիւր գիւղացւոց լաւ ոչխարներէն ծ հատ զատելէն և իր հայրենակից Մոլլախովացիներուն յանձնելէն և տարված ոչխարները արդէն սարը անցնելէն վերջ, հաւար կը կանչէ: Գիւղացիները, թէւ իրողութիւնը կը հասկնան, բայց չեն համարձակիր տրտնջալու, քանի որ հովիւր մի քանիներու պաշտպանեալն է:

Ցաւալի է ըսել որ մեծաւ մասամբ հայ գիւղացւոց մէջ ախտ գարձած է հովիւները, տեղերու ու գիւղերու պահապանները քիւրդ կարգել, սա սիալ կարծիրով թէ քիւրդը՝ քրդուն խամրելով՝ իրենց չի վնասեր, բայց իրականութիւնը սա է, որ քրդելն իրենց պաշտօնավարութեան միջոցն ամեն ծակն ու ծուկը լաւ ուսումնասիրելով՝ յարմար ժամանակին առիթը չեն փախցուներ ուզածնուն պէս մտնելու և գողնալու: Քըրդերն առհասարակ իրենց ծանօթ հայերէն կը գողանան քան թէ անծանօթներէն. ծանօթներու տուն գողութեան գնացած ժամանակներ այնպիսի համարձակութեամբ կը մտնեն, որ եթէ տեսնվին բարեկամ, ծանօթ են, իսկ եթէ չտեսնվին արդէն գող են: „Տին աղըմ, նա տին տըզըմ“: այսինքն „տեսան“ ես եմ, չտեսան՝ գող եմ“:

Նոյեմ. 1-ին Արօսի պահապան Խաչորեան Մարտօն իւր քուրդ լնկերի հետ կը տեսնին հինգ վեց քրդեր, որք տան մը պատը կը ծակեն: Մարտօն գովելի քաջութեամբ գողերու հետ կը կոռու և դաշցնի հարվածով մէկին կը վիրաւորէ, որ վերջը կը սատկէ, իսկ ինքը սիւրմէի գնտակով գետին կը փովի կովի ժամանակ գիւրդ լնկերը զինք մենակ թողնելով կը փախչի. որմէ խրախուսած գիւրդ գողերը թէւեւ կը յաղթեն հայուն, բայց առանց բան մը կարենալ տանելու փախուստ կը դիմեն: Այդ գողերն Մոլլախովացիներն եղած են, որոնց վրայ գանգատն անօգուտ եղաւ:

Նոյեմ. 6-ին Պօղու գիւղի մօտ Պուրհանցի քրդերը, Սատօի տղան Խալճ. և երեք ճէլալցի քրդեր, պանդըստութենէն գնացող Պուլանցի 20-ի չափ հայերէն կը թալնեն. վնասը կը հասնի 50-60 սոկի. Գանգատ եղած է կառավարութեան, բայց անլսելի մնացած է, ինչպէս և ամեն գանգատ:

Նոյեմ. 7-ին Երկրի խաղաղութիւնը պահապանելու պատրուակաւ Խնուս եկած զօրաց մի քանին Հապատին և Մարտօն գիւղերը գալով իրենց ձիոց կերցնելու համար գանըրի կը պահանջնեն: Գիւղացիք աղաքանք կը յայտնեն, որ իրենց գիւղում բնաւ գարի չկայ: Բայց զօրքերը, ծեծելով, հայհայելով անպատճառ գարի կուղեն: Վերջ ի վերջ կը համաձայնին, որ գարի տեղ ցորեն տան: Այս անգամ զօրքերը՝ ցորենը ձիանը չեն ուտեր լսելով կը պահեն հետերնին տանելու և կերթան խոտերու գէզերէն բոնի խուձերը բերելու: Ասոր վրայ բարկացած հայերը ողորս գու պատուիրեցերը լաւ դաս մը կուտան զօրաց:

 (Կը շարաւակի)

Ն Ա Մ Ա Կ Տ Ր Ա Պ Ւ Զ Ո Ն Ւ Ց

Մայիսի սկզբները հոս ձերբակալեցին Եղիա Բաբերդցեան երիտասարդը, որ 10-15 օր առաջ վերադարձած էր Սամսոնէն, ուրտեղ երկար ատենէ ի վեր առետրական գործով կը դժոնվէր: Եղիան Սամսոն կը հիւանդանայ և, տեսնելով, որ հիւանդութիւնն օր աւուր կը ծանրանայ, կը վճռէ Տրապիզոն վերադառնալ և հոն, իր լուսանեաց գրկին մէջ դարմանվիլ: Եղիան եկած օրէն անկողին կը մտնի և բժիշկ կը հրաւիրվի զինքը դարմանելու: Բայց հիւանդի վիճակն օր աւուր կը ծանրանայ և շուտով ամրող ընտանիքը մահուան երկիւղի մէջ կընկնի:

Օր մը յանկարծ Եղիայի մեծ եղբայրը—Սարգիս Բաբերդցեանը, քանի մը ոստիկաններ խանութիւն մէջ կը ձերբակալեն առանց պատճառի, առանց որ և է բացատրութեան, բռնութեամբ կառավարութեան տունը կը տանին: Հոն Սարգիսէն կը պահանջեն իր եղբօր տեղն ըսել: Հակառակ պարագային կը սպառնան զինքը եղբօր տեղ բանդարկել և բանդին մէջ փթեցնել: Խեղմ մարդը նախ կը զարմանայ, կուզէ եղբօր յանցանքն իմանալ, որով աւելի կը գրգուէ թուրքական դատաւորներուն: Ասոնք քանի մը ծանր ու անարդական խօսքերով կը լուցնեն Սարգիսը և կառաջարկեն ընտրել երկուսէն մէկը: Կամ եղբօր տեղը ցցց տալ կամ բանդ նստիլ:

Ան ատեն Սարգիսը կը յայտնէ եղբօր տեղը և կաւեցունէ, որ եղբօր վիճակը բաւական երկիւղափի է:

Այս լուրն առածին պէս, իսկոյն քանի մը փոլիս և զաթիւներ կը կանչին և Սարգիսի հետ տուն կուղարկին Եղիան ձերբակալելու անմիջապէս: Փոլիսները ձիշտ Սարգիսի պատմածի պէս կը գտնին եղբօրը, բայց և այնպէս կուզեն բանդ փոխադրել: ընտանիքը կը հակառակի և թոյլ չի տար: Կառավարութեան հրամանով բէլիստիէի (քաղաքական) թուրք բժիշկը կուղարկիլ քըննելու հիւանդի վիճակը, ընտանիքի կողմէն ալ կը հրաւիրվին թէ հիւանդը դարմանող և թէ այլ բժիշկներ թուրք բժիշկը կը յայտնէ, որ կարելի է հիւանդը հիւանդանոց փոխադրել և հոն դարմանել: Միւս բժիշկներն ընդհակառակը կը պնդեն, որ հիւանդի վիճակը ծանր է և փոխադրութիւնը կրնայ վատ հետեանքները ունենալ: Կառավարութիւնն իրեն բժշկին կը լսէ և կուզէ հիւանդը փոխադրել: Հիւանդի մայրը, եղբայրը կազմածն, որ քանի մը օր թոյլ տան, մինչեւ հիւանդը քիչ մը կազդուրվի, ետքը փոխադրեն, բայց անօգուտ: Ան ատեն եղբայրը կը խոստանայ, ամեն երաշխաւորութիւն կուտայ, նորէն կը մերժիլ և հիւանդը բռնի կը փոխադրվի բանդը: Եղիայի բանտ փոխադրած ժամանակ բացված տեսարանը յոյժ սրտաճմէի էր: Կարծես Բաբերդցեաններու տունէն: Երիտասարդ Եղիայի դադաղը գերեզմանոց կը տանէին: Եւ գաւառական բանդը և անոնց հիւանդանոցները մայրէն անոնց հիւանդանոցները շշմարած գերեզմանները են, միայն այն տարբերութեամբ, որ հիւանդանոցներու հիւանդները կենդանի մեռեալներ են:

Քանի մը օրէն Եղիան Պօլիս կուղարկեն: Անոր ընտանիքը պատահաբար այդ կիմանայ: Ծերունի մայրը և

եղբայրը նաւամատոյց կիշնեն վերջին անգամ տեսնելու, գուցէ և վերջին անգամ համբուրելու Եղիան, որու յանցանքը մինչեւ վերջը չկրցին իմանալ: Կը լսվի թէ Սամսոնի հայ և թուրք անսիղդ լոտեսներու բազմաթիւ զոհերէն մէկն ալ Եղիան է: Փօլիսները և ոչ իսկ մօտ կը թողուն զառամեալ մօրը: մայրը կաղերսէ, անգութներու գութը շարժելու խօսքեր կըսէ, բոլորն անլսելի կը ման: Եղիան, չնայելով իր հիւանդ ու ծանր վիճակին, այս սրտաշարժ տեսարանին չի դիմանար, կը բռնկի, կը բողոքէ և քանի մը խօսք կը նետէ անսիրտ ոստիկաններուն, որոնք հիւանդին կից մը տալով՝ նաւակը կը նետեն և շոգենաւ կը փոխադրեն, անկէ ալ Պօլիս: Ցարդ ոչ մէկ լուր, ոչ մէկ տեղեկութիւն ընտանիքը չկրցաւ առնել Եղիայի գյուռւթեան և ուր գտնվելու մասին: Արգեօք Եղիան կենդանի՞ է, թէ մեռած, Աւ ծովուն, թէ Մարմարայի ալիքներուն կուլ գնաց, յայտնի չէ:

Սամսոնէն հոս շլթայակապ 15 հայ բանտարկեալ ներ բերվեցան: Բանտարկեալներու մեծագյն մասը Յ. Գարա հիսարցի են, քանի մը, հոգի Սամսոնցի, 2-3 հոգի ալ Թրապիզոնցի: Ասոնց ձերբակալած են որպէս յեղափոխականներ: Ամանց քով զէնքեր, ուազմամթերք և հագուստ են գտեր: Ասոնց դատը հոս պիտի տեսնվի, բայց խնդրած են, որ իրենց դատը Պօլիս տեսնվի, որովհետեւ գաւառական դատարաններու վրայ վատահութիւն չունեն: Անոնց բողոքն անհետեանք են թողոցեր:

Տրապիզոնի գիւղերը գարնան ի վեր կը պտտի 12 անձէ բաղկացած տաճկական աւազակախումբ մը և անլուր վասններ կը հասցունէ հայ գիւղացիներուն: Այս աւազակապին խումբը կարծես դիդմամբ կազմված է միմիայն հայերուս համար: Օր մը չանցներ, որ պս աւազակները հայ մը չկողողապտեն, տուն մը չթալնեն: Անցեալներ պս աւազակապին խումբը գիւղէն հարս մը կը տանի մօտակայ անտառը: Ամբողջ գիւղերը կարգով կը լւկեն հարսը և լուսադէմին ուժասպառ հարսը կը ձգեն, կը մեկնին: Հարսը, երբ քիչ մը ուշքի կուդայ, մէծ դժուարութեան բողոքեցին: ինչպէս շատ մը բողոքներ, այս ալ անլսելի թողուցին: Աւազակապին խումբը դեռ կը շարունակէ անպատճի իր ասպատակութիւնները:

Սամսոնէն կը գրեն մեղ որ Սեբաստիոնէն բնին և Պօլիս ուղարկեցին ասկէ Յ ամիս առաջ խումբ մը հայ բանտարկեալներ, որոնց ձամբուն սարսափելի տանջանք, չարչարանք էին տուել: Ճամբան զինւարները բռնաբարած են պստիներն և այն սատիճանն ծեծած ու տանջած են, որ պս դժբաղներէ մէկը ճամբան մեռեր է: Այս խմբի մէջ էր և քահանայ մը՝ Վահան Ժամկոչեան, իսկ միւսներու անուններն էին, Վարդան Ճերմակեան, Գրիգոր Քէշիշեան, Յակոբ Խանճեան և Պետրոս Էքսիրմածեան:

Թէնիքէչի Նիկողոս անուն հայ լրտես մը, որ երկար ատեն ի վեր կը շրջէր Պարտիզակ, Թզմիտ և շըրջակայ գիւղերը յեղափոխականներ փնտուելու և այդ կողմերու հայերը լոտեսներ համար, ոչինչ չկրնալով դանելի անլուր զրպարտութիւնների դիմեց և բազմաթիւ

ձերբակալութիւններ ընել տուաւ:

Լրտես սիկողոսը, որին ուղարկած էր կառավարութիւնը, կը մատնէ Պարտիզակի նշան և քանի մը հարուստ հայեր: Կառավարութիւնը անմիջապէս քանի մը փօխիսներով զինեալ զապթիաներով կը կոնէ ասոնց տունները խիստ խուզարկութիւններ կրնէ, բայց ոչինչ չեն դոնիր: Քաղաքի մէջ կը ձերբակալեն ընդամենը 20 հոգի առանց որ և պատճառի, առանց որ և է փաստի և հաստատութեան: Ըատերը բաւական ստակ կերցնելով կաշառքներ տալով ազատ եղած են, բայց նշան աղան և ուրիշ 4 հարուստներ, որոնք կը զուգարստին իրեւ յեղափոխականներ, փօխադրվեցան Պօլիս: Անոցմէ մեծաքանակ գումար մը պահանջեր են, մերժվեր են, ուստի զայրացած ծանր ու շինծու ամբաստանութիւններով շղթայակապ Պօլիս տարվեցան: Տարակոյս չկայ, որ նշան աղան և իր ընկերները բոլորին անմեղ, դժուար թէ արդարանան առանց դատաւորներու դըրպանները ոսկիով հաստացնելու:

Խորացված իրաւունք Դաշտի Հայոց

Կ Ռ Ի Ւ Ս Ա Հ Մ Ա Ն Ա Գ Լ Խ Ո Ւ Մ

Մեր մի կօմիտէտից ստացած նամակից քաղում ենք հետեւալը: —

Սահմանագլուխմ՝ մեր հրոսակային խմբերից մէկը յանկարծ պատահում է տաճկական կանոնաւոր զօրքին: Վերջիններս տեսնելով տղերանցը, սկսում են հրացան արձակել: Առաջնորդը, որը մի վիթխարի, քաջ և համակրելի երիտասարդ է, դեռ աշխատում է որքան կարելի է լուսթեամբ վերջ տալ գործին, բայց տեսնելով որ թշնամին չի խնայում իրանց և ամենայն արագութեամբ մօտենում է, հրամայում է տղերանցը ետ դառնալ և դիմադրել: Տղերը իսկոյն դառնում են դէպի թշնամին, մանաւանդ երկու ուստաստանցիները — Ալէքսանդրապօտիկը — և մէկից տասը հրացան արձակում թշնամու վերայ և դարձնալ շարունակում իւրեանց ճանապարհը: Հենց առաջն դիմադրութիւնից յետոյ թշնամին բոլորին լողում է և փախչում մօտակայ. Պարագիլսա, գայրմագամանիստ գիւղը և եղելութեան մասին իմաց տալիս այնտեղի զօրքի հրամանատարին և գայմագամին: Այս անդամ ահագին ուժով դիմում են դէպի դիմադրութեան տեղը և ահագին աղմուկ բարձրացնում: Բայց արդէն ուշ է լինում, որովհետեւ տղերը իւրեց հետքը կորցած են լինում: Զօրքը ցրվում է զանազան կողմեր, որպէս զի գտնի սաւազակներին: Վերջապէս երկար դէն ման գալուց յետոյ զօրքերին չանդիպում է տղերանցից մէկը, որը մթութեան մէջ կորցնելով ընկերներին, վերադառնալիս է եղել դէպի մեր կողմերը: Սրան բռնելուն պէս սկսվում է տաճկական աննկարագրելի տանջանքը՝ ընկերների ով լինելը և ուր զնալն իմանալու նպատակով: Բայց մինչև այժմ ոչ ոքի անուն չի տուել բռնվածը. տաճիկների բոլոր հարցերին նա պատասխաննել է, որ իրենց դիմադրողը միայն ինքն է եղել և ուրիշ ոչ ոք: Երկար չարչարելուց և ոչ մի տեղեկութիւն չտանալուց յետոյ, խեղճին կալանաւորված ուղարկում են Հասան-Ղալա: Սրան միաց-

նում են և մի ուրիշ երիտասարդ, որին բռնում են զազախները ուղարկած հողի վրայ և յանձնում տաճիկներին:

Նշն գէպքի առթիւ Տաճկաստանի մեր թղթակցից ստացել ենք հետևեալը: —

Յունիս ամսոյ 20-ին Տաճկահայ երիտասարդներէ կազմված մի խումբ մոաղիր էր անցնել Հայաստան և գործել ժողովրդի օգտին: Երբ տաճկաց սահմանագրութիւն Գարաբիլսէ քրդաբնակ գիւղի քով կը հասնեն, պահապան զօրքերը առջները կտրելով կը պոռան անձնատուր լինել: Նախ խումբը խոյս կուտայ գէթ անվաստնելու նպատակաւ բայց երբ զօրքերը կսկսեն հրացանիւ գնտակներ տեղացներ խմբի առաջնորդող ազնիւ երիտասարդը կը պոռայ: Աղջայք, ետ դարձէք ամեն տեղ մահը մի է: Գիշերային խորը լուսթեան մէջ կը սկսեն օրինակելի քաջութեամբ դիմադրել: Մօտակայ Մուղարածուղ Արփաչայ, Փօրիկ և Գարաբիլիսէ քիւրդաբնակ գիւղեր հաւարի կը հասնեն և չորս կողմէն կը շրջապատին: Աերջապէս 4 ժամ՝ շարունակ կուելով և խոյս տալով բաւական տեղ հետանալէ վերջ քրդաց օգնութեան կը հասնին 40 հեծեալ զօրք ևս: Յայնժամ կրիին կը սաստկանայ կոիւր: Վերջապէս կը յաջողին երկու զօրք գետին փռել և ազատվել իսկ սոտիկանը և քիւրդերը կը յաջողին Առաքել և Մ կ ր օ անուն երիտասարդները ձերբակալել: Վերջինիս սաստիկ կը գանակոնթեն: Խարազանը կապայտ հետքեր կը թողու, բայց ընկերների անուն տալ անհնարին կը լինի:

Լ Ա Յ Ս Մ Ե Ա Վ Ա Ր Ա Մ Ա Ն Ա Գ Լ Խ Ո Ւ Մ

Գ Ի Տ Տ Ա Կ Ա Ն Ա Վ Օ Ց Ա Ր Ա Պ Մ Ա Ն (Թարգման.)

Հեղինակ՝ Պրիդրին Էնդելսի

Մեր խմբագրութիւնից կարելի է ստանալ նշնապէս:

1. Ապստամբական Ռդի:

2. Յեղափոխական Կեանքից:

3. Գաղտնի Տպարան:

Պատրաստվում է.

Կ Ո Ւ Կ Ո Ւ Ն Ե Ա Ն Ի Խ Ո Ւ Մ Բ Ա Ր Ը Ա Կ Ա Ն Ա Գ Լ

Կուիրատվութիւնների ցուցակ:

Վրէժից 10ր. Խաչգողից 12ր. Սարաբարայից 5ր. Զալյատեանից 20ր. Անկելանոցից 23ր., 30ր., 197ր., 129ր., 21ր., 21ր., 90ր., 63ր., 42ր., 62ր., 77ր. Գնձ. 100ր., 200ր., 50ր., 150ր. Կայծիկից 21ր., 110ր., 35ր., 8. Մ-ից 10ր. Առ. Թ-ից 15ր. Արշակից 18ր. Վարդաթաշէնից 20ր. Բ-ի-ից 600ր., 200ր. Երն.-ից 100ր. Զ. Ք. Կան. Խմբ. 32ր. Երն.-ից 60ր. Օդու.-ից Մնա.-ից 20ր. Ա. Շ.-ից 80ֆր. Մ. Ա.-ից 100ֆր. Օր. Շ.-ից 20ֆր. Շ. Ք. Շ.-ից 30ր. Բ-մ.-ից 45ֆր. Փթ. 20ր. Բ-գ.-ից 30ր. Խմդ.-ից 10ֆր.

(Կը շարունակվի)

Դաշնակցութեան անժանօթներից խնդրվում է թղթակցութեան և նուիրատվութեան համար դիմել:

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.